Ուստի երբ ազատ գտաւ ինքզինքը շղթայներէ, դարձաւ հարցուց Խոսրովի.

— Ես չեմ իմանար, թէ երա՞զ է այս ամէն բան, թէ ոչ:

— Հիմա ամէն բան քեզ կը բացատրեմ, սիրելի Գուրգէն, մտնենք նաւ եւ հոն կը խօսինք:

— Բայց Խոսրով, ես անօթի եմ, դու չես դիտէր թէ այս անհաւատները զիս ինչչա՛փ անօթի եւ ծարաւ ապրելու վարժեցնել ջանացին:

— Հիմա, հիմա,— ըսաւ Խոսրով,— տղա՛ք, երթանք մտնենք նաւերը:

Եւ հազիւ հինգ վայրկեան եղաւ՝ Գուրգէն նստած էր Խոսրովու եւ Հեղինէի մէջտեղ ղեկին քով, որ Խոսրով կը կառավարէր, ձուկի եւ հաւու խորոված առջեւը, եւ Հեղինէ, որ գինի կը մատռուակէր իւր ձեռոք:

Լուսինը լուսաւորել էր այդ գեղեցիկ կ'ապուտան ծովակը, գիշերուան լռութիւնը թիակներու կանոնաւոր եալ հարուածը միայն կ'ընդհատէր, երբ Գուրգէն զօրացեալ եւ ինքզինք գտնելով հարցուց Հեղինէին նայելով.

— Այս լուռ պատանին ո՞վ է, Խոսրով, ես սա տեսած պէտք է լինի մ, այս կերպարանքն ինձ բոլորովին անծանօթ չէ:

— Սա իմ քեռորդիս է,— պատասխանեց Խոսրով,— ես չուզեցի, որ մեր արշաւանաց ընկերանայ, բայց անկարելի եղաւ զինք համոզել: Ետքը քեզի կը պատմեմ, դու հիմա հանգիստդ նայէ, մեյ մը ցամաք ելնենք այն ժամանակ ամէն բան կ'իմանաս:

— Հանգիստ գտնելու համար պէտք է ապահով տեղ մը հասնինք, լուացվիմ, սա աղտեղի զգեստներես ազատիմ:

— Այդ ամէնը հոգացուած է,— ըսաւ Հեղինէ: